ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ
ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՀԱՆԳ

A—10 ՊՐԵՊԱՐԱՏՈՎ ՍԵՐՄԵՐԸ ՄՐԻԿԻՑ ԱԽՏԱՀԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳՅՈՒՂՇՐԱՏ 1937 ՅԵՐԵՎԱՆ

30 JAN 2018
631.36.:631.52

ԽՍՀՄ Միության Հողագործության Ժողովրդական Կոմիսար՝ Մ. ՉԵՐՆՈՎ
15-ը հունվարի 1937 թ.

ՀՐԱՀԱՆԳ
Ա—10 ՊՐԵՊԱՐԱՏԻ ԳՈՐԾԱԴՐՄԱՆ՝ ԼԵՐՄԵՐԸ ՄՐԻԿԻՑ ԱԽՏԱՀԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ա—10 պրեպարատը գործադրվում է վորպես չոր ախտահանիչ՝ աշնանացան և գարնանացան ցորենների (բացի յարովիզացած) կարծրամրիկի դեմ և աշորայի (տարեկան) թաց ու ցողունային մրիկի դեմ։

Ախտահանումը կարող է կատարվել անմիջապես ցանքից մի քանի շաբաթ առաջ, բայց վոչ շուտ մեկ ու կես ամսից մինչև ցանքը։

Սերմերը պետք է լինեն նախապես զտված և տեսակավորված։ Նրանց խոնավությունը չպետք է գերազանցի 15%-ից։

Մեկ ցենտներ սերմացուն ախտահանելու համար վերցնում են 100 գրամ պրեպարատ (1 տոննն հատիկին մեկ կիլոգրամ)։

Ա—10 պրեպարատի ախտահանումը կատարվում է մեքենաներով՝ «ԱԲ-2», «Իդեալ», «Ուրոժայ» և այլն, իսկ բացակայելու դեպքում ախտահանումը թույլատրվում է դրա համար հատուկ հարմարեցված տակառներում (տես «ախտահանման նախապատրաստման» բաժանքում)։

Պրեպարատի խառնումը հատիկի հետ պետք է կատարվի ամենախնամքով և հավասարաչափ. «բաժին առ բաժին» գործող մեքենաների համար («Իդեալ», «Ուրոժայ» և այլն) խառնումը պետք է կատարվի վոչ պակաս 5 րոպեյից։

Վոչ մի դեպքում չի կարելի սերմերն ախտահանել թիելով կույտերում կամ այլ պարզեցրած ձևերով, վորոնք չեն ապահովում ախտահանիչի հավասարաչափ խառնումը հատիկի հետ։

Պրեպարատի փոշեցրումը (քամուն տրվելը) նվազեցնելու համար մեքենայից դուրս յեկած հատիկը պետք է լցնել խոնավացրած պարկերի մեջ, յեթե այդ հատիկը պահվելու յե վոչ ավելի 10 որից։ Պարկերի խոնավացումը կատարվում է աշխատանքի նախորյակին՝ ջրցանումով, վորից հետո նրանց դարսում են միասին՝ ցամաքելը կանխելու համար։ Յեթե ախտահանումը կատարվում է վաղորոք (ավելի քան 10 որից), այդ ժամանակ ախտահանված հատիկը կարելի յե լցնել ամուր պարկերի մեջ, առանց խոնավացնելու։ Ախտահանված հատիկն առանց տարայի դաշտ փոխադրելու դեպքում պետք է ծածկել ջրով թրջված բրեզենտով կամ պարկերով, կամ թե տախտակե վահանով, վորպեսզի թույլ չտրվի պրեպարատի փոշեցրումը։ Յեթե ախտահանումը կատարվում է վաղորոք, այն ժամանակ A—10 պրեպարատով մշակված հատիկը պահվում է վոչ ախտահանված պարկերից առանձին, կատարելով նրանց վրա համապատասխան նշում։ Յեթե տնտեսությունը չունի պարկերի անհրաժեշտ քանակ, այդ դեպքում ախտահանումը լավ է կատարել ցանքի ժամանակ։ Ախտահանված հատիկի պահպանումն շտեմարանում (ամբար) կարելի յե թույլ տալ միայն ծայրահեղ դեպքում, յեթե տնտեսությունում միանգամայն բացակայում են

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՍՄԱՐ
Ա-28225գր

պարկերը, իսկ ձեռք բերելու համար չկա վոչ մի հնարավորություն։ Այդ դեպքում ախտահանված հատիկը լցվում է կույտերով փայտե հատակի վրա և այդ ձևով պահպանվում մինչև ցանքը։ Դրա համար պետք է առանձնացնել հատուկ շտեմարաններ և պահպանել միմիայն ախտահանված հատիկը։ Ախտահանված հատիկը դաշտ դուրս բերելուց հետո շենքը՝ հատակը, առաստաղը, պատերը՝ մաքրվում է թրջած ջնջոցով, հետո խնամքով ծեփվում է քլորակրային լուծույթով, չորացվում և ոգտագործվում է սերմացու հատիկի պահպանման համար։ A—10 պրեպարատով ախտահանված սերմացուն չի կարելի ոգտագործել վորպես կեր՝ մարդու և կենդանիների համար։

ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Ախտահանիչ մեքենայի նախապատրաստման համար անրաժեշտ է վերացնել պրեպարատի փոշեցրման բոլոր հնարավոր միջոցները։ Դրան կարելի յե հասնել՝ փակելով խնամքով մեքենայի թմբուկի ճեղքերը, ամուր սեղմելով կափարիչը ֆունդիսիդի բունկերին, ախտահանված հատիկն ընդունելով խոնավացրած պարկերի մեջ։ Ախտահանման ժամանակ անհրաժեշտ է խստությամբ պահպանել սահմանված դեղաքանակի (դոզիրովկա) ճշտությունը։ «Բաժին առ բաժին» գործող մեքենաների համար դրան կարելի յե հասնել պարբերաբար կշռելով սահմանված չափը (մերկա), իսկ «անընդհատ» գործող մեքենաների համար (ԱԲ-2), շնորհիվ թույն մատուցող մեխանիզմի ստուգման, այդ դեպքում վերացնելով բոլոր հնարավոր խանգարումները, վորովհետև նման խանգարումները կարող են առաջացնել թույնի մատակարարման ընդհատում։

«Անընդհատ» գործող մեքենաների ճիշտ դեղաքանա-

կի ստուգումը կատարվում է հետևյալ ձևով՝ ֆունդիսիդ բունկերի յելքի բացվածքի տակ տեղավորվում է թիթեղյա տուփ, վորի մեջ ամեն մի ցենտներ սերմացու անցնելու ժամանակ հավաքվում է բունկերից ընդունված ամբողջ պրեպարատը։ Հավաքված պրեպարատը կշռվում է։ Այդ գործողությունը կրկնվում է միքանի անգամ, մինչև վոր ստացվում է ֆունդիսիդ՝ հավասար 100 գրամ մեկ ցենտներ հատիկին։ Աշխատանքի ժամանակ կատարվում է դեղաքանակի ճշտության կրկնակի ստուգում, շնորհիվ ստացված՝ ախտահանված հատիկի և ծախսված ֆունդիսիդի քանակների հարաբերության։ Յեթե նկատվում է նորմայի կամ հարաբերության խախտում, այն ժամանակ պետք է կատարվի թույն մատակարելու կրկնակի ստուգում, ինչպես նկարագրված է վերևում։ Չի կարելի վոչ մի դեպքում գործածել հին, չորացած տակառները A—10 պրեպարատով չոր ախտահանման ժամանակ։ Բայց վորովհետև չոր ախտահանման մեքենաներ տեղերում չկան բավարար քանակությամբ, ուստի կարելի յե գործածել այդ նպատակի համար հատուկ հարմարեցրած 15—20 դույլանոց տակառներ։ Դրա համար պետք է վերցնել ամուր տակառ (լավ է կաղնի), ամրացնել մետաղյա շրջանակներով, հետո կտրել բացվածք՝ 20×25 սանտիմետր մեծությամբ։ Կափարիչի շրջապատը պետք է պատել ռետինե ժապավենով կամ թաղիքով (քեչայով), վորպեսզի լրիվ կանխվի պրեպարատի փոշեցրումը։ Բացվածքի բերնին ամրացվում է կեռիկ (կրյուչոկ)՝ պարկերի համար։ Տակառը նստեցվում է դույմանոց յերկաթյա առանցքի վրա, վորը յերկու ծայրից ունենում է կոթեր՝ պտտեցնելու համար։ Տակառի ներսից առանցքին պետք է ամրացնել 1—2 տախտակ՝ լավ խառնելու համար։ Տակառը դրվում — ամրացվում է տախտակյա առանցքակալերի կամ հատուկ հենարանների վրա (Նկ.1)։

A—10 պրեպարատով ախտահանում կատարելու ժամանակ կոլտնտեսության արտադրական բրիգադն առանձնացնում է հատուկ ոդակ, վորն աշխատելու յե ՄՏ կայանի, կամ շրջհողբաժնի գյուղատնտեսի կամ բույսերի պաշտպանության գծով աշխատող մասնագետների ղեկավարությամբ։



Նկ. 1. տակառ, վոր հարմարեցված է A—10 պրեպարատով հատիկն ախտահանելու համար

ա) ընդհանուր տեսքը, բ) կափարիչը

Ոդակի բոլոր անդամները պետք է նախորոք պատրաստվեն, յուրացնելով ներկա հրահանգը, տիրապետեն աշխատանքի տեխնիկային ու տեղյակ լինեն նախազգուշական բոլոր միջոցառումներին։

Գյուղատնտեսը պարտավոր է ամեն որ ստուգման յենթարկել ինչպես ախտահանման, նույնպես և ախտա-

հանված հատիկը դաշտ փոխադրելու ու ցանելու աշխատանքները։

Ախտահանման աշխատանքներին անհրաժեշտ է առաջին հերթին ներգրավել Պաշըավիաքիմի ջոկատները։

A—10 պրեպարատով ախտահանված յուրաքանչյուր բաժին հատիկի համար պետք է կազմվեն համապատասխան ակտեր, ստորագրված՝ կոլտնտեսության նախագահի կամ նրա տեղակալի, բրիգադավարի կամ ախտահանման ողակից առանձնացվածի ու ախտահանումը ղեկավարող գյուղատնտեսի կողմից։

Ակտերի մեջ պետք է նշել. 1. յերբ է կատարվել ախտահանումը, 2. ի՞նչ մեքենայով է ախտահանված, 3. ախտահանված հատիկի քանակը և տեսակը (ցորեն, աշորա. ցանկալի յե ցույց տալ նաև սորտը). 4. ծախսված պրեպարատի քանակը։

ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

A—10 պրեպարատը թունավոր է և ունի խիստ գրգռիչ հատկություններ։ Ամենաչնչին չափը կարող է առաջացնել քթի, կոկորդի և աչքի լորձաթաղանթի գրգռում, ինչպես նաև հագի, աչքացավի և կոկորդի խեղդում, իսկ մեծ չափերի ներշնչման դեպքում կարող է առաջացնել քթի արյունահոսություն և սրտի խառնում։ A—10 պրեպարատը հանդիսանում է կայուն քիմիական միացություն, վոր ողում գազերի անջատում չի առաջացնում։ Լինելով շատ մանր աղացված, նա աշխատանքի ժամանակ ուժեղ փոշիացում է առաջացնում ողում, ներշնչելիս կարող է նույնիսկ թունավորել աշխատողներին կամ առաջացնել գրգռում վերևում նշված որգանների։

Աշխատանքի ճիշտ կազմակերպման և բոլոր նախազգուշական միջոցների ճշգրիտ պահպանման դեպքում միայն հնարավոր է միանգամայն վերացնել վերոհիշյալ յերևույթները։

A—10 պրեպարատով ախտահանումը կատարվում է միայն բացոթյա կամ, հակառակ պարագայում (անբավարարաստ յեղանակներին), ծածկոցի տակ (նավես)։

Ողի մշտական հոսանքը կամ թեթև քամին կպակսեցնի ողում պրեպարատի կուտակումը և անհամեմատ կհեշտացնի աշխատանքի պայմանները։ Ախտահանիչ մեքենան դրվում է պահեստի մոտ այն հաշվով, վորպեսզի պրեպարատի փոշին քամու միջոցով տարվի վոչ թե դեպի բնակելի շենքերը, այլ բացոթյա տարածություն։ Աշխատանքի վայրը դեգազացիայի չի յենթարկվում։ Ախտահանումը շենքերում արգելվում է։ Քթի, կոկորդի, աչքի գրգռման ու թունավորման դեպքերից խուսափելու համար, ախտահանումը պետք է կատարել հատուկ դիմակներով՝ բաղկացած ֆիլտրից, ռետինե դիմակից և ապակյա ակ·ոթներից (նկ. 2)։ Ֆիլտրը կազմված է այնպես, վոր նրա տուփում գտնված բամբակը կարելի յե անընդհատ փոխել, յերբ նրա մեջ կուտակվում է փոշին։ A—10 պրեպարատով աշխատանքի ժամանակ չի կարելի գործածել վաճառքում յեղած ռեսպիրատորները, վորովհետև նրանք ամուր չեն փակցվում դեմքին և նրանց ոգտագործումը չի տալիս դրական արդյունք։

Ախտահանման ժամանակ կարելի յե ոգտվել նաև ամեն տեսակ մարկայի հակագազերով (որինակ՝ ՏՏՍ.)։ Տրնտեսությունը հակագազեր չունենալու դեպքում կարող է ձեռք բերել Պաշըավիաքիմի քաղաքային կամ շրջանային մատակարարման խանութներից։

Յեթե ախտահանումը կատարվում է համեմատաբար հերմետիկ մեքենաներով, վորպիսին աշխատանքի ընթացքում չի առաջացնում պրեպարատի փոշեցրում, այդ դեպքում դիմակը կամ հակագազը հագնում է միայն մեկ բանվոր

վորն աշխատում է ախտահանված հատիկով ընդունվող պարկերի մոտ։ Այդ նույն բանվորը կատարում է նաև բունկերի կամ տակառի մեջ թույն լցնելու գործը, իսկ մյուս բանվորները կարող են սահմանափակվել, կապելով միայն քիթը և բերանը թանզիվի կամ բամբակի չոր կապոցով։

Նկ. 2. Նախազգուշական դիմակ՝ A—10 պրեպարատով աշխատելու ժամանակ

Հակագազով կամ դիմակով աշխատող բանվորի աշխատանքը հեշտացնելու համար, բանվորները պետք է հերթով փոխվեն տեղերով։

Դիմակը կամ հակագազը մեկ աշխատողից մյուսին հանձնելու դեպքում անհրաժեշտ է ներսը հականեխել սպիրտով (դենատուրատ)։

Ախտահանված հատիկի բեռնումը և դատարկումը պետք է կատարել դիմակով կամ հակագազով։

Յեթե տեղի յե ունենում աշխատողների թունավորման կամ քթի, կոկորդի և աչքերի գրգռման դեպք, պետք է ժամանակավորապես դադարեցնել աշխատանքը, լվանալ տուժած որդանները բորաթթվի թույլ լուծույթով և մաքուր ջրով ու խմցնել կաթ։ Աշխատողները, վորպես կանոն, պետք է ապահովվեն արտհագուստով՝ կոմբինեզոնով. յեթե կոմբինեզոնը բացակայում է, կարելի յե փոխարինել խալաթով։ Կանայք առանց կոմբինեզոնի աշխատանքի մեջ չեն թույլատրվում։ Ախտահանման մեջ աշխատող ամեն վոք պետք է զբաղված լինի այդ աշխատանքում վոչ ավելի 6 ժամից և ստանա որական մեկ լիտր կաթ. ընդմիջումի ժամանակ արտհագուստը պետք է թողնել տեղում, իսկ աշխատանքը վերջացնելուց հետո պետք է լավ թափ տալ և մաքրել։ Թե աշխատանքի վայրում և թե արտհագուստով կեր ընդունելն արգելվում է։ Պրեպարատով ապականված ձեռքերով չի կարելի շփել դեմքը, քիթը, աչքերը, բերանը և այլ որդաններ։ Այն անձնավորությունները, վորոնք մարմնի բաց մասերում ունեն վերքեր, կտրվածքներ և այլն, այդ աշխատանքում չեն մասնակցում։ Ուտելուց առաջ պետք է ձեռքերը մաքուր լվանալ։ Աշխատանքը վերջացնելուց հետո պետք է լավ մաքրել հագուստը պրեպարատից, ընդունել ընդհանուր դուշ կամ լվանալ ամբողջ մարմինը։ Ախտահանված հատիկը ցանվում է շարքացան մեքենաներով—ցանքը ձեռքով չի թույլատրվում։ Շարքացանի մոտ աշխատողը պետք է ունենա իր հետ հակագազ

կամ դիմակ՝ կարիքի դեպքում գործածելու համար (որինակ՝ շարքացանը հատիկ լցնելու, շարքացանը մաքրելու ժամանակ և այլն)։ Ցանքի ժամանակ, յեթե պրեպարատը չի խանգարում ցանողին, դիմակը կարող է հանվել։ Յեթե ախտահանված հատիկը շարքացանի մեջ զգուշությամբ չի լցվում, պրեպարատի մի մասը կարող է տարվել քամու միջոցով դեպի ձիերը, առաջացնելով նրանց քթաբերանի գրգռում և հաճախակի փռշտոց։ Այդ դրությունից խուսափելու համար, ձիերին անպայման պետք է կանգնեցնել քամուն հակառակ, վորպեսզի նրանց վրա չընկնի պրեպարատի փոշին։

Աշխատանքի ժամանակ շարքացանի յերկու կողքից կախվում է հատուկ գոգնոց՝ պարկերից պատրաստված, վորոնք պարբերաբար խոնավացվում են փոշեցրումը կանխելու համար։ Աշխատանքից հետո բոլոր գործիքները՝ շարքացան, բեստարկա և այլն, լվացվում են ջրի հոսանքով, իսկ պարկերը լավ թափ են տրվում կամ մաքրվում, վորպեսզի նրանց վրա կպած չմնա պրեպարատ։ Շարքացանները լվանալուց հետո ցանող մասերը պետք է յուղել։

Յերեխաները, պատանիները մինչև 18 տարեկան և հղի կանայք այդ աշխատանքի մեջ մասնակցելու չեն թույլատրվում։

A—10 ՊՐԵՊԱՐԱՏԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

A—10 պրեպարատն անհրաժեշտ է պահել ֆնասատուների և հիվանդությունների պրեպարատի համար նախատեսված հատուկ պահեստում։ Պրեպարատի պահպանումն այն պահեստում, վորտեղ գտնվում են կերը, արդելվում է։ Քամի յեղանակներին պրեպարատի կշռումը և դատարկումը կատարվում է պահեստում։ Քամու բացակայության դեպքում այդ աշխատանքը կարելի յե կատարել բացօթյա։ այս կամ այն դեպքում էլ աշխատողները պետք է ապահովված լինեն դիմակներով կամ հակագազով։ Բաց թմբուկում և անոթներում յեղած՝ չոգտագործված պրեպարատը պետք է ամուր ծածկել, կանխելով փոշեցրման բոլոր հնարավոր միջոցները։

Նպատակված է բույսերի պաշտպանության Համամիութենական ինստիտուտի կողմից—ՀԱԴԻԼ (ՎԱՍՆԻԼ)։

Թարգմանեց՝ Ազբոնամ Գ. Մասուրյան
Գլա. խմբագիր՝ Ա. Աբրահամյան
Տեխ. խմբագիր՝ Ե. Այվազյան
Սրբագրիչ՝ Գար. Հակոբյան
Կոնարոլ սրբագրիչ՝ Վ. Ավաքյան
Գլավլիտ Լիցզոր № 1203
Հրատ. № 458, տիրաժ 1500, զամակ № 576
Հանձնվել է արտադրության 1937 թ. սեպտեմբի 2-ին
Մատրաքրվել է տպագրության համար 1937 թ. սեպտեմբի 13-ին

Գյուղհրատի տպարան, Երևան, Նալբանդյան 11

ՀՀ Ազգային գրադարան
NL0936643

1 9 ABГ. 1937 389
ԳԻՆԸ 20 ԿՈՊ.

II
28225

НАРКОМЗЕМ АРМ. ССР
ЗЕРНОВОЕ УПРАВЛЕНИЕ

ИНСТРУКЦИЯ
по применению препарата А—10
для протравливания семян
от головни

Сельхозгиз 1937 Ереван